

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՀԱՅԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎԱՆ



ՀԱՅՏԱՐԿՈՒՄ  
1935

Հ. ԱՐՐԱՅԱՄՈՎԻ

77.64 (Կ. 925)

ԽՍՀՄ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 196

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ



Հ 23106

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱԿՈՈՊԻ  
ՅԵՐԵՎԱՆ 1935

Պատ. իմբազիլ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ  
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ  
Գլուխակի լիազորի № 369, պատվեր № 22, տիրած 600  
Հանձնված և արտադրության 15 հոկտեմբերի 1935 թ.  
Առողջապահ և տպագրելու 7 նոյեմբերի 1935 թ.

ՀԱՅՏՆԱՐԴՈՒԹԻՒՆ ՏՎԱՐԱՆ 1935 ՑԵՐԵՎԱՆ

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Առևյն գրքույզի հեղինակը համառոտ կերպով տվել և գործադրության պատմությունը Հայաստանուում:

Նախահեղափոխական շրջանուում գորգագործությունը Հայաստանուում չափսազանց խղճուկ պատկեր ուներ Հայաստանի բոլոր շրջաններուում ցրված գորգագործներն աշխատում ենին ամենազժվարին պայմաններուում բարձր խավի համար: Սակայն Հայաստանի խորհրդայնացումից հետո, շնորհիվ Կոմունիստական կուսակցության ձեռք առած ամենակտրուկ միջոցների, 1925 թ. սկսած Հայաստանի Տնայնագործական կոոպերացիան համախմբում և հարցարդավոր տնայնագործների. կազմակերպում և սկզբնական շրջանուում փոքրիկ արտելներ Յերեվանուում յեզ մի շարք շրջաններուում: Ձեռք առած միջոցառումների շնորհիվ, կարճ ժամանակաշրջացքում աճում ու դարձանուում և գորգագործությունը Հայաստանուում:

Վորոգիս եքսպորտային արտադրություն, նաև շատ շուտով Հայանի յև դառնուում արտասահմանյան շուկաներուում: Հայկոմկուսի կենակումի ամենօրյա ոպերատիվ զեկավարության շնորհիվ վերջին տարիների ընթացքում կազմակերպվում են գորգագործական խոշոր արհեստանոցներ, ինչպես Յերեվանուում, Նույնպես Կիրովականուում, Իշխանուում, Ստեփանավանուում, Շամշադինուում, Մարտունիուում և այլն, վորոնց համար ստեղծվում են ամենայն հարմարություններ և վորոնց շնորհիվ այսոր մենք հնարիվորություն ունենք արտադրելու 11 հազար քառակուսի մետր դորպեր:

Հաշվի առնելով մեր յերկրի բանվորների, կոլտնտեսականների և ստախանուղականների աճող պահանջը, այս տարի ներքին շուկայի համար արտադրությունը յեն մեծ ծավալի և խոշոր քանակությամբ գորպեր:

Գորգագործության ասպարիգում մենք ունենք մի շարք լավագույն ստախանուղականներ և փորձված մասնագետներ, վորոնք տարիներ շարունակ պայմանակ պայմանակ են կուսակազմակերպությամբ գորպեր:

Թյան ոպերատիվ ղեկավարության ներքո Հայաստանի գործազոր-  
ծության զարգացման համար։ Այդ մասնագետների թվին ե պատ-  
կանում նաև սույն գրքույկի հեղինակ ընկ. ՀՌՎՍԵՓ ԱԲՐԱՀԱՄ-  
ՄԱՆՎԻԶԸ, վորը գորգագործությունը Հայաստանում զարգացնելու;  
նոր խորհրդային կազմեր պատրաստելու համար խոշոր աշխա-  
տանք ե կատարել այս տաս տարվա ընթացքում։

1925 թ. սկսած նա տարել ե մի շարք պատասխանառու-  
աշխատանքներ գորգագործության ասպարիզում։

1934 թ.՝ ՀՍԽՀ կենտղործկոմը բարձր գնահատելով ԱԲՐԱ-  
ՀԱՄԱՆՎԻԶԻ յերկարատելիվ, հարվածային յել արդյունավետ աշ-  
խատանքը ՀՍԽ Հանրապետության զարգացման գործում, ի նշան  
այդ բարձր գնահատականի, չնորհել ե նրան ՀՍԽՀ աշխատանքի  
հերոսի կոչումը։

Նրա «ԳՈՐԴԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» աշխա-  
տությունը պետք է համարել, ինարկե, վոչ թե Հայաստանի  
գորգագործության լրիվ պատմությունը, այլ, ինչպես հեղինակն  
ինքը ճիշտ անվանել ե, ներկայացնում ե գորդագործությունը  
Հայաստանում—նրա վերակառուցման որից մինչեւ 1936 թ.։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ

---

# ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԿԻ ԱԿՆԱՐԿԻ)

Մարդկության նախնական կարևորագույն ստեղծագործություններից մեկն են նաև մանաժագործությունը թե բուսական ցողուններից ու ծաղկներից (կանեփ, կտավիատ, բամբակ) և թե կենդանիների բրդից (վոչխար, ուղու, այծ):

ՅԵՐԵ և առաջին անգամ սկիզբ առել այդ արհեստը—մարդկության հայտնի չե, միայն մի բան ե պարզ, վոր նա սկսվել ե շատ անհիշելի ժամանակներից, հետագայում միայն գործ ե ածվել իրկը (թեշիկ), սանդերքը և ճախարակը, վորոնք մինչև այժմ ել դեռևս շատ յերկրներում գոյություն ունեն:

Միայն 19-րդ դարի սկզբներին Անգլիայում կարողացել են հարել թե բուրդ և թե բամբակ գղելու և մանելու մեքենաներ, վորոնք ներկայումս հասցված են զարմանալի կատարելագործության:

Մարդիկ դեռ շատ հին ժամանակներից սովորել են թե բուրերից և թե բրդից թել մանել, իսկ հետագայում աստիճանաբար սկսել են գործել նաև կենցաղային կարիքների համար զանազան հյուսվածքեղենն, բնշպես որինակ՝ պարկ, սփոռց, թաղիք, կարպետ և վերջապես նաև՝ զորք:

Սկզբնական շրջանում այդ գործվածքներն անկասկած յեղել են մի գույնի կամ բնական տարրեր զույներից, իսկ հետագայում կարողացել են գտնել բրդի ու բամբակի ներկելու միջոցները և սկսել ե զարգանալ ներկարարությունը:

Այսպիսով սկիզբ ե առել կարպետների և, հետագայում, գորգերի արտադրությունը: Սակայն այն ել մարդկությանը հայտնի չե, թե զորգագործությունն առաջին անգամ վորտեղ է ծագել և ինչպես ե տարածվել մյուս յերկրները՝ միայն մեզ հայտնի յե, վոր հնում գորգեր արտադրվելիս են յեղել և՝ Յեղիպտոսում և հին Հռոմանատանում և՝ Ասորեստանում և՝ այլ Արևելյան ու Փոքր Ասիայի յերկրներում և Հայաստանում:

Հունականն և հայկականն պատմագիրների վկայությամբ, հին ժամանակներում զորդագործությամբ զլիսավորապես զբաղվելիս և յեղել այդ ժամանակվա, այսպես ասած, բարձր դասակարգը և զորդեր զործելու արհեստը յեղել և առանձնապես հարգի Դործվածքների մեջ ամենաբարզը, ամենազեղցիկը և լավագույն զորդը արտադրվելիս են յեղել թագավորական ու իշխանական պարագաներում, վորտեղ առաջնակարգ վարպետունիները մրցում եյին իրար հետ սեփական արտադրությունների կատարելագործությամբ:

Հետագայում, այդ յերկրներում պատմական, քաղաքական անցքերի չորեհիվ, հատկապես առևտրական կապիտալի առաջցման հետևանքով, զորդեր արտադրելու արհեստը հետդիետեղառնում և աղքատացող մասսաների զբաղմունք:

Մեր որերում զորդագործությունը վոչ ամեն տեղ արդյունաբերական բնույթ ունի Թիչ թե շատ ունեվոր անտեսությունը զորդեր և նման իրեր արտադրում և վոչ թե վաճառելու, այլ իր ընտանիքի կարիքների համար, այսինքն անային սպառման կամ աղջկա ոժիտի կամ հենց մեկին ընծայելու համար և միայն ծայրահեղ կարիքի դեպքում և վաճառում այն. Դրա համար ել չքավոր ընտանիքներն են, վոր զորդեր արտադրում են ավելի շատ շուկայի համար կամ ուրիշների պատվերներով։ Այսպիսով զորդերը դառնում են վաճառքի առարկա:

Դեռ սրանից 80—100 տարի առաջ, յերբ քիմիական անելինի ներկեր չկային, զորդերի թելերը ներկվում եյին բացառապես բուսական ներկերով և այդպիսի զորդերից լավագույնները, զեր այն ժամանակ, բավական բարձր եյին զնահատվում։

Հատկապես նրանք բարձր եյին զնահատվում յեվրոպական ու ամերիկյան շուկաներում։

Լավորակ զորդերով առանձնապես հետաքրքրվում են նաև Յելլոպայի ու Ամերիկայի թանգարանները։ Որինակ՝ ի թիվս այլ յերկրների զորդերի մի քանի թանգարաններում (Վիեննա, Փարիզ, Բեռլին, Լոնդոն) մինչև այժմ ել պահվում են մի քանի շատ բարձր վորակի Հայկական հին զորդեր։

Այդպիսով գորգերի վաճառքը քանի զնում աշխատանում եր այն շափով, վոր շափով առևտուրը զարգանում եր արևելյան և արևմտյան յերկրների ու Ամերիկայի վաճառականության միջև։

Գորգերի արտահանումը Անդրկովկասից Յեվրոպա ու Ամերիկա ուժեղ զարկ և ստանում սրանից մոտավորապես 50 տարե-

առաջ, այն և 1878թ. Ռուս-թուրքական պատերազմից հետո, յերբ ցարական Ռուսաստանը տիրապետում է Բալթումը և ծովային հանապարհն և բացվում Յնիլրոպական շուկաների հետ, ուր գորդերն առաջացնում են խոշոր հետաքրքրություն ու պահանջ, իսկ նրանց առևտուրը վաճառականների համար հանդիսանում էր չափաղանց շահավետ մի գործ։ Դրա համար ևլ գորգերն ակտում են արտադրվել վոչ միայն գորգագործների սեփական կարիքները բայց արտօնությունը համար, այլ և վաճառքի համար։

Գորգագործությունը զարգացած յերկրներում, որինակ՝ Պարսկաստան, Թյուրքիա և այլն, սկսում են կաղղակերպվել հատուկ գորգագործական արհեստանոցներ, նույնիսկ մեքենայացված գործարաններ։

Հետապայում գորդիքի խոշոր գործարաններ հիմնվում են նաև Յնիլրոպական յերկրներում և Ամերիկայում, վորոնք զիխավորապես ընդորբնակում են արևելյան գորգերի նկարները։

Այդ մշքնայացված գործարանների գորգերն իրենց արտաքին տեսքով վոչ միայն չեյին տարբերվում անայնագործական գորգերից, այլ և թվում եյին գեղեցիկ, վորովինետն գործված են լինում միանագամայն ուղղիք և համաշափ, մյուս կողմից ել այդ գորգերն ավելի եժան են գնահատվում, ուստի զգալի չափով մրցում են անայնագործական գորգերի հետ։

Այսուամենայնիվ ձեռքով գործված գորգերի պահանջ, չնորդ հիվ նրանց յուրահատուկ գեղեցկության և զիմացկանության, տարեց-տարի մեծանում ե, և գորգագործությունը զնալով ավելի ևս սկսում և ծավալին ու դարձանալը զիխավորապես արևելյան յերկրների չքաղոր խավերի մեջ, վորոնց համար այդ արհեստը հանդիսանում է միակ յեկամափառ աղյուսը, թեև այդ յեկամուտը լինում և չնչին, չնորհիվ գաղութային անինա շահագործմանը։

Գորգագործության քանակապես ծավալման գուգընթաց սկսվում և գորգերի վորակի անկումը, չնորհիվ այդ ժամանակաշրջանում Անդրկովկաս մուտք գործած Յնիլրոպական քիմիական խունացող անելին ներկերի, վորոնք իրենց եժանության և ներկերու ձեի հեշտության տեսակնետից շատ շուտ տարածվում են ինչպես մյուս յերկրների, նույնպես և Հայաստանի գորգագործական շրջաններում։

Սակայն մյուս յերկրներում գորգագործների վորոշ մասը, յերբ համոզվում ե, վոր այդ ներկերը զիմացկուն չեն, հրաժարվում և այն դործածելուց, մինչդեռ Հայաստանում գրեթե բոլոր

գորգագործներն ամբողջովին անցնում են այդ ներկերի ոգտագործմանը, ուշադրություն չդարձնելով, վոր այդ անելին ներկերը խուսանում են և դրանով իսկ զցում են Հայաստանի գորգերի վորակը: Բացի դրանից, Հայաստանի գորգերի վորակն ավելի ևս ընկնում ե նաև այն պատճառով, վոր գորգագործներն սկսում են գործածել նոր Յեվրոպական նկարներ, որինակ՝ վարդեր, ծաղկեփառնջեր, զանազան կենդանիներ, թռչուններ, վորոնք հարզի չեն գորգերի նկատմամբ:

Բացի դրանից, գորգագործների շահագործումն առևտրականների կողմից քանի զնում ուժեղանում եւ Գորգագործների խոշոր մասը, այսինքն շուկայի համար աշխատողները գիտենալով, վոր գնորդը կամ պատվիրողը միմնույն և չի գնահատելու իր աշխատանքը և բավարար վարձատրություն չի տալու նրան, աշխատում և անուշադիր վերաբերքել գորգի հյուսվածքի վորակին, վորի հնորիվ գորգերն ստացվում են մեծ մասամբ թույլ նուր գործված, ծուռը, խորդուքորդ և այդ բոլորը միասին միանգամայն անարժեք են զարձնում Հայաստանի գորգերի խոշոր մասը, և նրանց արտահանումը զանազան յերկրներ իսպառ դադարում եւ Չնայած դրան, գորգերի արտադրությունը Հայաստանում քանակապես աճում է, վորովհետեւ այդ անվորակ գորգերը ցածր զնահատվելով մատչելի յեն զանում ներքին շուկայում վաճառվելու համար:

Հայաստանի գորգագործների տարեկան մաքուր յեկամուտը 1909—1910 թվականներում, մասնակի հետազոտության տվյալների համաձայն, միջին հաշվով 40 ռ. բանք չի յեղեւ, իսկ գորգագործությամբ պարագողների թիվը կազմել է կանանց ընդհանուր թվի 15 տոկոսը:

Այսպես և յեղեւ գորգագործության դրությունը մինչև 1914 թվի համաշխարհային պատերազմը, իսկ պատերազմի հետևանքով գորգերի եքսպորտը և վաճառքը ներքին շուկայում միանգամայն կանգ առավ: Գորգագործության քայլքայման համար նշանակություն ունեցավ նաև լեղակ (ինդիգո) ներկի բացակայությունը, վորը ստացվում էր Գերմանիայից, այդպիսով գորգերի արտադրությունն աստիճանաբար սկսեց պակասել իսկ 1915—1916 թվերին նա համարյա ամենուրեք բոլորովին զարգարեց գոյություն ունենալուց:

Մինչև համաշխարհային պատերազմը Ռուսաստանի ցարական կառավարությունը շատ քիչ ուշադրություն եր դարձնում գոր-

գագործության դարձացման, զորգնորի վորակի բարձրացման վրա, զորգագործները թողնված եյին իրենց բախտին ու ամբողջովին շարժի առևտրականների շահագործմանը: Զեր և վոչ մի հասարակական կազմակերպություն, վորը մտահոգված լինելու ոգնության գալու զորգագործներին, ցույց տարավ նրանց, թե ինչ տեսակի ու վորակի գորգերն են ավելի վնասատվում արտաքին շուկայում ու ավելի շահավիճակարող են լինել իրենց՝ զորգագործների համար:

Մինուն ժամանակ ջնայած նրան, վոր գորգերի առևտրով զրադիվում եյին բավականին թվով մանր ու խոշոր առևտրականներ ու գորգի առևտրից ահազին հարստություն ձեռք բերում, այսուամենայնիվ նրանք ընդհանրապես խուսափում եյին գորգերի արտադրության արհեստանոցային ձեռք, իսկ փորձ կատարողներն ել հանդիպում՝ անհաջողության, զլիսավորապես այն պատճառով, վոր այդ ավելի ձեռնարկ յեր անայնազործների միջոցով արտադրել քան վարձու բանվորական ուժի, վորի արժեքը համեմատած ավելի բարձր եր և վորը բարձրացնում եր զորգերի ինքնարժեքը Բացի այդ, առհասարակ նրանք այնքան ել շահագրգոված չեն յեղել խոչոր կապիտալ ներդրել այդ արտադրության մեջ, քանի վոր կապիտալի շրջանառությունը զորգերի արտադրության բնագավառում կատարվում ե վոչ այնքան արագ, ինչպես զորգերի առևտրի մեջ:

Գորգերի արտադրության համար արհեստանոցներ կազմակերպվել են առաջին անգամ Պարսկաստանում, վորտեղ խոչոր թվով ներդրավիլ են տղամարդիկի, այն ել զլիսավորապես քաղաքներում: Այստեղ գոյություն ունեն բազմաթիվ մանր արհեստանոցներ, վորոնց մեջ աշխատում են բացառապես տղամարդիկ և 10—12 տարեկան յերեխաներ, վորոնք անխնա կերպով շահագործվում եյին ձեռնարկատերերի կողմից: Նման արհեստանոցներ հետագայում յեղել են և ներկայումս գոյություն ունեն՝ Թյուրքիայում, Հնդկաստանում, Չինաստանում և Հունաստանում:

Իսկ նախկին Ռուսաստանի զորգագործական շրջաններում, ինչպես Թուրքմենստանում, Աղրբեջանում և Հայաստանում մինչև Հակոբեմբերյան հեղափոխությունը, բացի մի քանի պետական ցուցադրական դպրոց-արհեստանոցներից, այն ել միայն Աղրբեջանում, ուրիշ հասուն արդյունաբերական բնույթ կրող արհեստանոցներ բոլորովին չեն յեղել չհաշված գյուղական այն տնային տիպի արհեստանոցները, վորոնք պատահական կերպով բացվել ու փակվել են գյուղի կուլտակային տարբերի կողմից, ժամանա-

կավորապես շահագործելով շքավոր դեղնկունի գորգազործներին:

Դորգելը խոշոր արտադրությունն առաջին անգամ ձեռնարկում և Գեղմանական կառավարությունը Պարսկաստանում 1910 թվին և այդ գործը գրվում և կապիտալիստական բնույթի ուսցինալ հիմքերի վրա Զօնայած այդ ժամանակներում Ցեղոպայում ու Ամերիկայում արդեն դոյություն ունեցին գորգելը խոշոր մեքենայացված գործարաններ, սակայն գերմանացիք գերադասում են գորգելն արտադրել տնայնազործական յեղանակով, իսկ մեքենայացնում են միայն գորգաթելերի արտադրությունը և ներկելու Այդ նպատակի համար նրանք Թավրիզում կառուցում են մի հսկայական գործարան:

Դերմանացիները նպատակ եյին դրել գորդազործներին տատակարարել լավ ներկված թելեր, արժեքավոր նկարներ և դեկավարել արտադրությունը հատուկ պատրաստված մասնագետներով: Այդպիսով նրանք պատվերները միջոցով, թե արհեստանոցներում և թե առանձին գորգագործների տներում կարողանում են արտադրել շատ բարձր վորակի և գեղեցիկ գորգեր, վորոնք խոշոր հաջողություն են ունենում յեղոպական և ամերիկական շուկաներում:

Սակայն այդ ձեռնարկության գոյությունը յերկար չի տեսվում: Համաշխարհային պատերազմի ընթացքում, յերբ սուսական բանակը 1915 թ. համառ և Թարվիզ, դրավում և այդ գործարանը և բոլոր պատրաստի գորգերը, թելերն ու նյութերը փոխադրում թիֆլիս և հանձնում այստեղի տնայնազործական կոմիտեյին, իսկ մանարանի մեքենաներն ու նեացած սարքավորումը փոխադրվեցին Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլ քաղաքը:

Դրեթե նման ձեռնարկություն, բայց ավելի փոքր ծավալով, սակայն հանրոգուտ նպատակներով գոյություն ուներ նաև Թիֆլիսում 1907 թվականներին, վորը կոչվում եր Շկովկասյան Ծնայնագործական Կոմիտե և կազմակերպված եր հայտնի գյուղատրներն Հար Փիրալյանի ջանքերով:

Այդ կոմիտեն, կազմված լինելով պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, նպատակ ուներ նպաստելու Կովկասի տնայնագործական արդյունաբերությանը և կազմակերպչական ու տեխնիկական խորհուրդներով ովնել տնայնագործներին զարգացնելու և կատարելագործելու իրենց արհեստները:

Այդ ուղղությամբ կոմիտեն իր գլխավոր ուշադրությունը դարձրեց գորգագործության ու ջուրհակության արհեստների

զարգացման վրա, վորովն ամենատարածված և խոշոր անտեսական նշանակություն ունեցող արհեստները Այդ նպատակի համար Թիֆլիսում 1912 թ. կառուցել եր մեկ հաստակ շենք, վորտեղ տեղափոխած ելին մեքենայացքած մանարան, գորգերի համար բրդյա թերեր պատրաստելու, ներկատուն իր լաբարտորիտյով, նկարչական արհեստանոց գորդերի համար, նկարներ պատրաստելու, հյումանց՝ գորգերի տորթեր շնորհու, համապատասխան պահեստներ և բավականին ընդուրժակ թանգարան, վորտեղ համարգաված ելին ամեն տեսակի անայնազործական արտադրանքների արժեքավոր նմուշներ ու բառանկարներ

Այդ կամիսեն իր գործունեյությամբ բավականին զրական աշխատանք կատարեց Կովկասում գանազան արհեստների մասնագետներ պատրաստելու, ասպարեզում զարոց-արհեստանոցների և զարոցների միջոցով, զինավորապես Ազգը էջանում և Վրաստանում, բացի դրանից նաև գործուղելով ուսմանողներ Ռուսաստան հատուկ տեխնիկումներ, վորտեղ յերկու դպրոց կար, մեկը Սոմովից քաղաքում աղջիկների համար, իսկ մյուսը Վշինիյ Վոլոչիկ քաղաքում տղաների համար:

Այսուեղ անհրաժեշտ են նշել այդ յերկու դպրոցների չափագույն ուսուակար զերն ընդհանրապես Անդրկովկասի և մանավանդ Հայաստանի գորգագործության և ջուհակության արագ զարգացման համար Այդ դպրոցներում 3—4 տարվա ընթացքում ուսմանողները հիմնովին պատրաստվում ելին թե տեսականորեն և թե գործնականորեն:

Այդ դպրոցների շրջանավարտները, վերադառնալով Անդրկովկաս աշխատում են անայնազործական կոմիտեյում, վորպես գորդագործության և ջուհակության մասնագետներ ու դպրոց-արհեստանոցներում հրահանգիչներ, պատրաստելով նոր կադրեր Սակայն 1914 թ. պատերազմը քայլայեց ամեն ինչ ու ցիր ու ցան արագ այդ կադրերը:

Կովկասյան անայնազործական կոմիտեյի որինակով Թիֆլիսում և Բագվում մի քանի նման դպրոց-արհեստանոցներ կազմակերպվել ելին Անդրկովկասում Հայոց-բարեգործական և Բագվի մարդասիրական ընկերությունների կողմից, ուր սովորում ելին զինավորապես ջուհակության տեսականը և գործնականը, իսկ գորգագործության միայն գործնականը, վորի հետևանքով գործվում ելին միայն հասարակ տեսակի գորգեր, վորը վոչ մի արդյունք չի տալիս ու այդ պատճառով ել այդ գորգագործական

արհեստանոցները յերկար կյանք չունեցան և շուրջով մեկը մյուս սի հետեւից փակվեցին:

Նման արհեստանոցներ համաշխարհային պատերազմի ընթացքում ու մինչև 1924—1925 թ. թ. Հայաստանի սահմաններում և գլխավորապես Յերեվանում կազմակերպվեցին Ամերիկական կոմիտեյի կողմից, սակայն այդ արհեստանոցները, թեև իրենց ժավագով բավականին խոշոր եյին, բայց, վորովհետև արտադրության տեխնիկայի ռեկավարությունը հանձնված եր վոչ կուտուրապես պատրաստված մասնագետների, ուստի թե՛ ջուրհակությունը և թե գորգագործությունն այստեղ կատարվում եր չափազանց պրիմիտիվ ձևերով և ստացվում եր շատ ցածր վորակի արտադրություն, և վոչ մի գրական դեր չխաղացին կադրերի պատրաստման ասպարեզում:

1918—1920 թվականներին Հայաստանում դաշնակցության իշխանության որոք գորգագործության դրությունը վոչ միայն չխաղացավ, այլ ընդհակառակն ազգամիջյան կոիմների ու տնտեսական ընդհանուր անկման չնորհիվ ավելի ևս քայլայմեց և նույնիսկ վորոշ շրջաններում բոլորովին անհետացավ ու իսպառ չքացավ:

Դրան զուգընթաց Հայաստանից արտահանվում եյին այն բոլոր քիչ թե՛ շատ արժեքավոր գորգերը, վորոնք մնացել եյին տեղի բնակիչների մոտ:

Քիչ չեյին դեպքեր, յերբ դաշնակցական խմբապետների կողմից դանազան պատրվակի տակ, կամ բացարձակ թարանի միջոցով խուման եյին գյուղացիներից նրանց գորգերն ու վաճառում արտասահմանից յեկած հափշտակիչներին:

Գորգերը և արժեքավոր վայրուտային իրերը ձեռք եյին բերմում գլխավորապես զանազան ոտարերկրյա ներկայայուցիչների, միսիաների և անհատ սպեկույանուների կողմից, վորոնց թիմն որ որի վրա այդ ժամանակ Հայաստանում ավելանում եր: Այդպես շարունակվեց ամբողջ 3 տարի մինչև 1921 թ., յերբ Հայաստանում հաստատվեց Առհերդային իշխանություն և ընդմիշտ վերջ տվեց այդ գիշատիչ կողոպուտին:

## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՃՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՔ

1920 թ. վերջերին Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, ինչպես մեր տնտեսության բոլոր ընազավաններում, այսպես և տնախագործության ասպարիզում սկսվում է վերականգնում:

Առաջին տարիներում գորգագործությունն աչքաթող երարված, գորգագործներից շատ քչերին և միայն հաջողվում սկսել մոռացության տրված գորգերի արտադրությունը, այն ևլ իրենց կարիքների համար, իսկ մեծամասնությունը դուրկ լինելով գործիքներից և անհրաժեշտ նյութերից, չեր կարողանում դրադվել իր հիմ արհեստով:

1921 թ. Խորհրդային կառավարության ուշադրությունն է գրավում գորգագործությունն և ողոսակումն ՀՍԽՀ Ժողկոմի որոշ հրատարակում և մի դեկրետ «Տնախագործական ու մանր արդյունաբերության ուժանդակելու միջոցների մասին» և նույն թվի ոգոսատուի 24-ի դեկրետով Ժողտնտխորհին առընթեր հիմնվում ե տնայնագործական ու մանր արդյունաբերական գործերի վարչություն: Սակայն այդ վարչության գործունեյությունն սպասված արդյունք չի տալիս, և 1923 թ. նա կազմալուծվում ե: Այդ ժամանակ Թիֆլիսից հրավիրվում ե մի մասնագետ, վորը դեռ 1922 թ. կառավարության առաջ ինդիր և հարուցել Հայաստանում ստեղծելու մի հատուկ պետական մարմին, ոժանդակելու յերկրի տնախագործական արդյունաբերության դարձացման ու արհեստակորներին կոռպակերատիվ հիմունքներով կազմակերպման գործում:

1925 թ. մարտ ամսին Ժողկոմի որոշումի համաձայն Ֆերգանում կազմակերպվեց Հայաստանի Տնախագործության Կոմիտե, վորն աշխատանքի անցավ միայն հունիսից:

Կոմիտեի առաջ ինդիր եր գրված ոժանդակելու տնախագործական բոլոր արհեստների դարձացմանը, նրանց տեխնիկայի

կառուցրելագործման, անայնագործների և արհեստավորների կոռուկ-  
բացմանն ու նոր կադրերի պատրաստմանը:

Նախքան անահագործական կոմիտեի գործի անցնելը, 1924  
թվի վերջերին Յերեվանում, Խաղբորնողի ոժանուակությամբ,  
Սոցազրանին կից կադրակերպվել եր մեկ գորգագործական ար-  
հեստանոց 25—30 գորգագործներով, ղեկավարելիթյամբ մամա-



Նկ. № 1. Ա. Հայությանի Պատճենից գործված Յերեվանի արհեստանոցում  
1926 թ. Դարձնվելու օհկավարությամբ  
գետ և նկարիչ Դովլեթ Գարան Ֆիլիպին, վորը նոր եր յնեկել  
արտասահմանից (Հայէպից):

Այդ արհեստանոցում զանազան վորակի գորգերի թվում  
արտադրվում երին նաև նույն Գարան Ֆիլիպ նանի պատրաստմած

Նկարներից և նրա անմիջական դեկավարությամբ մի շարք գործեր հեղափոխական գործիչների՝ Կարլ Մարքսի, Լենինի և Կալինինի պատկերներով, շատ հաջող նմանությամբ, վորն առասարակ չափազանց դժվար և հաջողացնել գորգերի վրա:


Միաժամանակ այդ արհեստանոցում առաջին անգամ գործվեցին մի քանի բարձրորակ հայկական վոճի գորգեր և մեկ կլոր գորգ, ՀՍԽՀ պետական վրա (Նկ. № 1):

Այսուամենայիվ այդ արհեստանոցը 2 տարի գոյություն ունենալուց հետո փակվեց, կազմակերպչորեն նպատակահարմար հմքերի վրա դրված վիճակու և բավականաչափ շրջանառու միջոցներ չունենալու պատճառով: Հետազայում Գործառնության ֆիլի լուս շարունակեց աշխատել իր համար, գործելով մի շարք հայտնի հեղափոխական գործիչների հաջող պատկերներ, վորով նաև խոշոր հոչակ վաստակեց, իրու տաղանդավոր արվեստագետ դորգագործության ասպարիգում:

Այդ ժամանակ մեկ գորգագործական արհեստանոց կազմակերպված եր նաև Երևանի աշխատում, վորտեղ աշխատում եյին 15—20 գորգագործներ, սակայն հմուտ դեկավարի բացակայության պատճառով գորգերն արտադրվում եյին ցածր վորակի, վոչ եքսպորտային, վորի հետևանքով այս արհեստանոցը ևս չկարողացավ շարունակել իր գոյությունը և փակվեց 1927 թվին:

## Տ Ն Ա Յ Ն Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե Յ Ւ Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե

Տնայնագործական կոմիտեն առաջին հերթին իր ուշադրությունը դարձնում և Հայաստանում ամենատարածված յերկու արհեստաների՝ ջուրհակության ու գորգագործության զարգացման վրա, վորոնք տեխնիկապես շատ հետամիտ վիճակում եյին: Դորգագործությունն սկսել եր վերականգնել մի քանի շրջաններում անհատ գորգագործների մոտ, իսկ ջուրհակությունը, թեև իր գոյությունը զեր մի կերպ չարունակում եր, բայց շատ ցածր վորակի արտադրանք տալու հետևանքով, այն ել գանվում եր իր հոգեվարքի մեջ, վորովնետև խոշոր քանակությամբ ու եժան գներով կտորեղին եր ստացվում կենսարունական նահանգներից, վորի հետևանքով մասցել եյին միայն մի քանի արհեստանց, այն ել Յերեվանում: Այդ անմիջիթար վիճակից հաճելու համար կոմիտեն նպատակահարմար համերեց դպրոց-արհեստանոցի միջոցով



Նախ պատրաստել անհրաժեշտ թվով նոր մասնագետ կադրեր, Ռատի այդ նպատակի համար Վրաստանից հրավիրվեց այդ յերկու արևեստներին հմուտ մասնագետ Սըբռուհի Բըռոյանցը, վորը Սոմովիցի հրահանգչական դպրոցն ավարտեուց հետո յերկար տարիներ աշխատել եր ռուսացչունու պաշտոնով նախկին կովկասյան անայնազործական կոմիտեյի դպրոց-արհեստանոց-ներում:

Այդպիսով առաջին անգամ Յերեվանում հիմնվեց գորգագործության ու ջուհակության դպրոց-արհեստանոց, վորը խոշոր զեր կատարեց հետազայում Հայաստանի գորգագործության ու ջուհակության զարգացման և կատարելազործման ասպարիգում։ Սակայն դրամական միջոցներ չունենալու պատճառով անայնագործական կոմիտեն ստիգմած յեղավ ժամանակավորապես հրաժարվել բրդյա կոորեղենների ու գորգերի արտադրությունից և իր ռոշադրությունը դարձրեց բամբակյա կտորեղենների արտադրության վրա։ Այդ նպատակի համար ձեռք բերեց փակվելու աստիճանին հասած ջուհականոցներից մեկն իր 10 դադարաններով, և նինականի տեքստիլ գործարանից 100 կիլո պատրաստի բամբակյա մանվածք և անցավ աշխատանքին։

Թիֆլիսում ձեռք բերվեց նաև մեկ մամուլ (պլես) կտորեղենները մամլելու (վերամշակելու) համար, վորպիսին մինչև այդ Հայաստանում չկար։

Տնայնագործական կոմիտեն այնքան գուրք եր միջոցներից, վոր նույնիսկ չկարողացավ ձեռք բերել մեկ փոքր շենք ներկատան համար և սկզբնական շրջանում գործվածքեղենների թելերը ներկվում եյին փողոցի մայթի վրա, մի փոքր կաթսայի մեջ։ Չնայած մի շարք անհարմարություններին և շրջապատի թերահավատ վերաբերմունքին, մեկ ամիս չանցած այդ արհեստանոցի նոր սովորող կադրերի արտադրած կոորեղենները՝ շոտլանդիան և սարպինկան, արդեն բավական նուրբ և բարձր վորակի եյին և հաջող եյին վաճառվում։

Բացի դրանից, այդ արհեստանոցում պատրաստվեցին նաև մի քանի գորգագործներ, վարժվելով նոր կատարելագործված տորքերի վրա, Այդ գորգագործներն արտադրեցին մի շարք գորգերի բարձր վորակի նմուշներ, վորոնց գործվածքի խտությունը մեկ քառակումի մետրի մեջ, կազմում եր 250.000 հանգույցից մինչև 300,000 հանգույց, վորպիսի խտության գորգեց Հայաստանում մինչ այդ չեյին գործված, բայց և այնպես միջոց-

Ների սղության պատճառով հնարավոր չեղավ գորգերի արտադրությունը լայն կերպով ծավալել մինչև 1927 թ., յերբ պիտության կողմից այդ նպատակի համար կոմիտեյի հաջորդ Հայտնարկության առաջին արամաղրվեցին հատուկ միջոցներ:

Տնախազործական կոմիտեն մինչև այդ ստացել եր 5000 ռ. կորճատել վարկ, վորը նույնպես հնարավորություն չեր տալիս նրան ձեռնամուխ լինել գորգերի կամ մահուռի արտադրության կազմակերպմանը, վորի համար պահանջվում ե. առնասարակ յերկարատել վարկ, ուստի կոմիտեն ստիպված եր այդ ստացած գումարն ոգտագործել, ինչպես բամբակյա կտորեղինների արտադրության ծավալման, նույնպես և այլ արտադրությունների արտել ների կազմակերպման համար:

Այդպիսով առաջին անգամ Հայաստանում—Յերեվանում կազմակերպվում են մի շարք կոոպերատիվ արտեխներ, ջուրհանության, ծխախոտագործության, ասեղնագործության, փայտամշակման և այլն:

Այդ արտեխներից առանձնապես խոշոր նշանակություն ունեցած ջուրհաներինը, վորը կազմակերպվեց կոմիտեյի արհեստանոցում պատրաստված ու Տաճկաստանից յեկած արարկիրցի ջուրհաներից:

1926 թ. ոգոսառոս ամսին կազմակերպվում ե. Հայանարկություն, վորի առաջ դրված են լինում նույն նպատակները, ինչ վոր ունեցել եր անախազործական կոմիտեն, դրա համար նոր վարչությունն իր աշխատակիցներով նույն յեռանդով ու նվիրվածությամբ շարունակում ե կոոպերացնել, ներդրավելով իր ցանցում նորանոր անախազործներ ու արհեստավորներ:

1927 թ. վերջերին արտեխների թիվը արգեն կրկնապատկվում է, միաժամանակ նրանք խոշորացվում են, կային նաև գորգագործական 7 արտեխներ մոտ 200 անդամներով, ընդուրում գորգագործության գարգացման և եքսպորտ գորգերի արտադրման համար պետությունը բաց ե թողնում Հայանարկության հատուկ վարկ, որանով հնարավորություն եր այդ կարևոր արհեստի վրա, վորի համար ձեռք ե բերվում անհրաժեշտ քանակի բուրդ, ներկեր, գործիքներ և տարվում ե լայն կազմակերպչական աշխատանք:

# ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԴՐՁԱՆԸ

Նկատի ունենալով գորգագործության առանձնատում և բարդ բնույթը, նրա արտադրությունը զեկավարելու համար Հայանարկություն իր ապարատում ստեղծում ե հատուկ բաժին:

Գորգագործական բաժինը նպատակ է դնում գորգագործներին մատակարարել պատրաստի թերեր, կատարելագործված տորթեր (գազզյաներ) գործիքներ, արժեքավոր գորգերի նկարներ, և սովորեցնել արտադրելու ավելի նույրը գործվածքի ու միորինակ



Բըջյա թել մանելը հչեղանի գորգաբաելում 1928 թ.

(ստանդարտ) չափերի գորգերու Միաժամանակ աշխատառում ե ձեռք թերել բըջի վերամշակության—զգելու և մանելու մեքենաներ, այսինքն վորոշմեքենայացում ստցնել աշխատանքի պրոցեսի մեջ մինչ այդ մենքաթերու ե լինում բըջի վերամշակումը կատարել ձեռքով հենց շրջանի գորգագործական արտենելուում, իսկ գորգի խավի թելերն անողայժման բուսական ներկերով ներկելու համար շրջաններում կազմակերպվում են հատուկ ներկարարական արտեներու:

Այդ բոլոր աշխատանքը կատարվում է չափագանց դժվարին պայմաններում, համապատասխան հարմար շենքեր և մենքաթեշարթվով պատրաստված մասնագետ կադրեր չունենալու հետևանքով,

այսուամենայնիվ, յերբ աշխատանքները հետդիետե ծավալվում են, անհրաժեշտ է դառնում նոր մասնագետ կադրեր պատրաստել, վարպետի նպատակով 1928 թ. սկզբին նջելանում կազմակերպվում են 2 ամսյա գորգագործական դասընթացներ, վորտեղ հրահանգահունի Բ բ ո յ ա ն ց ի անմիջական դեկավարությամբ տեղական դրագետ գեղջկահներից գործնականութեն և տեսականութեն պատրաստվում են տասը նոր մասնագետներ, վորոնք հետազայտմ կարգանում են ինքնուրույն կերպով զեկավարել գորգագործական արտեխների աշխատանքները:

Նման դասընթացներ հետազայտմ կազմակերպվում են նաև Հայաստանի մյուս ըրջաններում, ու մինչև 1931 թ. հիշյալ կադրերի թիվը 100-ից անցնում է Նրանցից շատերը մինչև այժմ ել գորգագործության բնագավառում աշխատում են դեկավար մասնագետների պաշտոններում և իրենց հերթին պատրաստում են նոր կադրեր:

Այդ կադրերից պետք եւ հիշատակել գորգագործական հրահանգիչներ Հ ը ա ն ո ւ շ Ա յ ն ա ջ յ ա ն ի ն, վորը 1932 թ. ընթացքում յեղել և Գորգմիության վարչության նախադար, Բ ն ջ ա ն Ա թ ա ր ե կ յ ա ն ի ն ու Ս ո վ ո մ ո ն Բ ա զ դ ո ս ա ր յ ա ն ի ն:

Վերոհիշյալ ձեռնարկութեների չնորհիվ Հայանարկուուն արդեն 1928 թ. կարողանում եւ առաջին անգամ հանձել Անդրազետառի բաժանմունքին եքսպորտի համար մոտ 2000 մետր բավականի բարձր վորակի գորգեր, վոր արտահանվում և Անդիա, Ամերիկա և Գերմանիա և ունենում եւ խոշոր հաջողություն: (Նկ. № 3):

Հայաստանի գորգերի վորակի մասին հետազայտմ թե Անգլիայի և թե Ամերիկայի մեր Արտաքին Առևտորի Ժողկոմատի ներկայացուցիչների կողմից ստացվում են շատ դրական, նույնիսկ գովաստանական ինֆորմացիաներ, Այդ տեսակետից ուշագրության արժանի յեւ գերմանական մի շաբաթերթի «Դոյչեմենութիւն» ցայտունգների հոդվածը, վորը նվիրված եւ 1930 թ. գորգերի միջազգային առևտորին, վորտեղ իմբջիւ այլոց զրգած եւ հետեւյլ՝

«Ընդհանուրագես գորգերի արտադրությունը ևս նոր դրային Միության նսգամյա պլանի հիման վրա, դեռ չտվեց այս արդյունքը, վորի չնորհիվ նոր արտադրված գորգերն իրենց վարակով և չափերով բավարար են եքսպորտ շուկայի պահանջներին, ընդհանուրակար, այդ պահանջներին հարմարվեն այնտեղ կատարվում եւ շատ դանդաղ և ինչպես յերեքում եւ գորգերի արտադրություններին դեռ հայտնի չեն արտասահմանյան շուկայի



Նկ. 3. Դոբր պարսկական-հայկական գումակ քարեզմած Անդրկոսիկանի,  
—ընթացանոցում 1934 թ.


Ներկա պահանջները, այսպես, վոր միայն մի քարի ընկերություններ տալիս են այդ շուկային ներկա պահանջներին համապատասխան ապրանք, այն ել չափազանց բարձր վորակի: Գետք և շեշտել Հայստանի արհեստագործական ընկերությունը՝ «Հայստարկոպղը», վորի արտադրած գորգերը հաջող վաճառվում են Ենվրոպական շուկաներում: Այդ գորգերի վորոշ քանակն ստացվեց այստեղ 1930 թ. և վաճառվեց մի քանի որդիա մեջ: Խոսքը վերաբերում է հայկական բարձրորակ գորգերին, վոր գործված և լավ նկարներից և դիմացկուն ներկերից ու մենք պատահել ենք նախապատերազմյան շրջանում Ռուսաստանի լավագույն գորգերի մեջ:

Շաբաթաթերթում հիշված Հայստանի այդ հաջողությունը սկսութ և վերապրել այն նպատականարմար միջոցառութերին և դործի ճիշտ դրվածքին, վոր սկզբից կիրառվեցին Հայստարկոպակի գորգագործական բաժնի կողմից, այն ե՝ գորգագործները կազմակերպում եյին կատարելագործված տորգերով ու գործիքներով, պատրաստի ներկված թելերով և արժեքավոր նկարներով:


Այդ հաջողությունը հետևանք եր նաև այն դեկավարության, վոր ցույց և տրվում գորգագործնի մասնագետ հրահանդիների կողմից, վորի շնորհիվ և Հայրավոր յեղավ 1—2 տարվա ընթացքում վոչ թե միայն վերականգնել Հայստանում գորգագործությունը, այլ և անհամեմատ բարձր տեխնիկայի աստիճանի հասցնել: Սակայն այստեղ ևս կային բացեր, որինակ՝ գործն ավելի բավարարի վրա դնելու համար դեռ բացակայում եյին համապատասխան շենքեր, պահեստներ թե կենտրոնում և թե շրջաններում և դեռ բրդի վերամշակությունն ու թելերի ներկելու գործըն ամբողջությունն կենտրոնացված չեր, չկային պահանջման քանակի տորգեր, գործիքներ, նաև չեր բավարարում դեկավարմանագետների թիվը, ուստի և բոլոր գորգերը 100 տոկոսով բարձր վորակի չեյին:

Այդ բացերը վերացնելու համար անհրաժեշտ եր բավականին խոշոր կապիտալ ներդրութեր, սակայն այդ նպատակի համար համապատասխան գումարները բավական չեյին, գրա համար ել Մինարարությունը կատարվում եր աստիճանաբար, մաս-մաս, վորի հետևանքով գորգերի արտադրությունն այսպիսի արագ թափով չեր ծավալում, ինչպես այդ անհրաժեշտ եր պլանները կատարելու համար, իսկ մի շաբաթ շրջաններում ել գորգագործությունը մեռում եր անկազմակերպ պիճակում:

Նկ. 4. Կիբառութեան շատրվանը՝ արհեստականը, պահպանի և հանդիպութեան ժամանակ 1920 թ. կերպութեան



Բայց և այսպես Հայանարկուողը, չսորհիվ պետության լայն ռժանդակության, հնարավորություն ունեցավ մի քանի տարվա ընթացքում գորդագործության կարիքների համար կատարել բավական խոշոր շինարարական աշխատանք։ Այսպես 1918 թ. ձեռք բերվեց մեկ փոքր կոմպլեկտ բուրդ գղելու և մանելու մեջնաները 80 մանող իլիկներով, իսկ 1930 թ. Գերմանիայից ստացվեց հատուկ պատվերով ավելի կատարելագործված սիստեմի մեջնաները 200 իլիկով, նաև մեկ բուրդ լվանալու մեջնա և այլպի-



Նկ. 5. Խնեմանի գորգագործական արտելի արհեստանոցի չեղաց 1929 թ.

առ առաջին անգամ Հայաստանում հիմք դրվեց բրդի վերամշակության մեջնայացմանը։

Միաժամանակ այդ տարիների ընթացքում Յերեվանում կազմակերպվեց բավականին խոշոր ներկատուն, վորտեղ թելերը ներկելու և չորացնելու գործը կատարվում եր շողիի միջոցով։ Բացի դրանից կիրովականում կառուցվեց մեկ բավականին մեծ շենք արհեստաների և գորգերի արհեստանոցի համար, նման մեկ շնչ ավելի փոքր ծավալի, կառուցվեց իջևանում։ Պատրաստվեց իս մոտ 2000 տորթ ու անհրաժեշտ քանակի գործիքներ (մկրատ, շամակ, կտուտիչ) գորգագործներին մատակարարելու համար։

Այդպիսով առաջին հնգամյակի վերջին տարին, այս ե՛ 332 թ. սկզբներին Հայանարկուողի գորգագործական բաժինն իր

ցանցում ուներ 41 արտել 2900 գորգագործ անդամներով և այդ տարվա եքսպորտի պլանը (9000 քառ. մետր) գերակատարվեց և եքսպորտին հանձնվեց 9050 ք.մ. գորգ, իսկ ամրողջ առաջին հընդգամյակի ընթացքում եքսպորտին հանձնված գորգերի քանակը կազմում է 22000 ք. մետր:

Գորգագործական արտելներն ըստ շրջանների բաժանվում են հետևյալ կերպով՝

Ենթավայր	1 արտել	Դիլիջան	2 արտել
Լեռնական	3 >	Խջեվան	10 >
Կերպական	5 >	Շամշադին	7 >
Ալանիերդի	5 >	Գորիս	3 >
Ստեփանավան	4 >	Սխսիսն	1 >

1932 թ. ընթացքում արտելների թիվը հասավ 45-ի 3200: Գորգագործներով, վորից 4 նոր արտելներ կաղմակերպվեցին: Դարպագյաղի շրջանում:

Գորգագործության արագ զարգացումը դեռ 1930 թ. Հայտնարկուողի առաջ պահանջ դրեց ավելի ուժեղացնել գորգագործական բաժինը, վորի համար նպատակահարմար գտնվեց կազմակերպել գորգագործական կոռուպերատուլ արտելների միություն և այդ նպատակով Յերեվանում հրավիրվեց բոլոր արտելների ներկայացուցիչներից համագումար, ուր ընտրվեց Գորգմիության առանձին վարչություն և մտավ Հայտնարկուողի ցանցի մեջ:

Այդ վերակառուցման խորհիվ գորգերի արտադրությունը տարվեց ավելի ուժեղ թափուլ թրամ վորոշ չափով նպաստեց նաև այս, վոր այդ տարբիներում արտասահմանից (Հունաստանից) Հայաստան ներգաղթեցին տաճկահայեր, վորոնց մեջ կային վորակավոր կին գորգագործներ: Հաստատվելով Յերեվանում ու Լենինականում նրանք նշանակալից դեր կատարեցին այս յերկու քաղաքներում բարձր վորակի գորգերի արտադրության զարգացման գործում:

Նրանց հետ Հունաստանից յեկել եր նաև ընկ. Խորեն Մահմետ առաջանը, վորը գիտեր գորգերի քիմիական նյութերով լվանալու մասնագիտությունն և, հրավիրվելով Գորգմիության կողմից այդ աշխատանքին, սկիզբը դրեց Հայաստանում գորգերի քիմիական լվացման գործին, վորը հետագայում խոշոր նշանակություն և ունենում Միության և մյուս հանրապետությունների համար, վորակի այն դեր գոյություն չուներ:

Այսպիսով Գորգմիությունն ունենալով գորգագործությունն

սպասարկող բոլոր ռժանդակ մասնագիտական ճյուղերը (ցեխերը) մասամբ ամրողապիճն մեքենայացրած, մասամբ կիսամեքենայացրած, ինչպես որինակ՝ բուրդը լվանալու, պղելու, մանելու, թելերը վորուրելու (գորդի հենքի և մեջնաթելի համար 1930 թ. սկսած գործածվում և բամբակյա թել), ձեռք և բերված հատուկ թել վորուրելու և բրդյա թելերը ներկելու մեքենաներ, սակայն այդ ձեռնարկությունների Յերեզան քաղաքում ցըվածության և մի տեղ չկենտրոնացված լինելու հետևանքով խիստ դժվարացնում եր-



Նկ. 8. Դորդմիավորման կենարոնական պահեստի և գորդի արհեստանոցի շենքը Յերեզանում 1934 թ.

նրանց վրա անմիջական դեկավարություն ունենալը և միաժամանակ խոշոր ծախսեր եր պահանջում նյութերը մեկ ձեռնարկությունից մյոււլը փոխադրելու համար:

Վերոհիշյալը նկատի ունենալով 1932 թ. Դորդմիության վարչությունը վորոշում է կառուցել Յերեզանում միշարք շենքեր և այդ բոլոր ձեռնարկությունները կենտրոնացնել մեկ հողամասի վրա, սակայն միջոցների սղության պատճառով հնարավոր չի լինում բոլոր նախատեսված շենքերի կառուցումն սկսել միաժամանակ, ուստի նախ և առաջ ձեռնարկվում է կառուցել ամենաանհրաժեշտը, այն եւ կենտրոնական պահեստի, գործադրժական արհեստանոցի և վարչության գրասենյակի շենքը, վորը և ավարտվում ե-

1933 թ. վերջին Նույն 1933 թվին Միութենական Արտաքին Առևտորի Ժողովում ատի ոժանդակությամբ ձեռնարկվում ե կառուցել գորգերի քիմիական լվացարանի արհեստանոցի շենքը, իսկ սկզած 1934 թ. կառուցվում ե նիրկատան շենքը և մեկ չենք ել բանվար-ների ու մասնագետների բնակարանների և մտուրի համար:

Կենտրոնական պահեստի, դրասենյակի, գործերի արհեստանոցի  
և մուռի կառուցումով Գորգմիությունը հնարավորություն և  
ստանում կարգավորելու նախ պահեստի տշխատանքները, վորո



Նկ. 7. Գոր զմիավորման դաշտերի թիվականությունը և պահպանը՝ արհեստական ցեղերը 1934 թ. Ծերպավան

չափազմանց խոջոր նշանակություն ունի գորգերի արտադրության գործում, վլրոհետև նախքան թելերն ու այլ նյութերը և գործիքները շրջաններ ուղարկեն ու արտադրության բաց թողնելը՝ անհրաժեշտ ե պահեստում նրանց դասավորել զտել ստուգել վլրակը, վորպիսի աշխատանքը նախկին փոքր, մութ, խօնազ պահեստներում հաճախ նարավոր չեր լինում կատարել:

Գրասենյակի պահեատին մոտ լինելը նույնպես իր խոշոր առավելությունն ունի շրջանառության արագ կատարման ու անմիջապես դեկավարության ու հսկողության համար:

Նույն շենքի վերին հարկում Գորգմիռությունը կաղմակերպեց

գորգերի բավականի մեծ արհեստանոց հարյուր գորգագործների համար, վորբն կլից՝ մառը և մանկապարտեղ գորգադործների յերեխաների, այլ յել հատուկ մեկ սենյակ թանգարանի համար։

Գորգերի արհեստանոցի կազմակերպումը Յերեվանում վաղուց իր զրագեցնում Գորգմիության վարչության, վորովհետել միայն արհեստանոցային պայմաններում հնարավոր և արտադրել ավելի բարձր վորակի գորգեր։

Գորգադործության մեջ հայկական վոճի վերականգման գործում,



Նկ. 8. Յերեվանի գորգաբենատանոցին կից մանկապարտեղ 1934 թ. վորը կազմում և Գորգմիության նպատակներից մեկը, վորոշ գերկատարեց նայել Հունաստանից յեկած յերիտասարդ նկարիչ Հակոբ Քեշեյանը, վորը լավ ծանոթ եր գորգերի տարրեր վոճերին և հատուկ ուսումնասիրել հայկական գորգերի վոճը։ Գորգմիության կողմից հրավիրվելով աշխատատանքի Քեշեյանը սպառատեց մի շարք հայկական վոճի նկարներ և վորոնցից սկսեցին արտադրվել առանձնապես արժեքավոր գորգեր։

Գորգմության ունեցած նվաճումներից առանձնապես պետք են նշել նաև գորգերի քիմիական լվացման գործի կարևոր նշանակությունը, վորն ունեցավ ամբողջ միության համար, վորովհետեւ այն բոլոր գորգերը, վորոնք արտահանվում եյին արտասահմանյան շուկաները, նախքան վաճառելը նախապես յենթարկվում եյին քիմիական լվացման։

Այդպիսի լվացքատներ գոյություն ունեն թե Յեվրոպական յերկրներում և թե Ամերիկայում:

Դորզերի քիմիական նյութերով լվանալը հետապնդում և մի քանի նպատակ—առաջին՝ դրանով փորձվում է գորդի թերկը գույների դիմացկանությունը և յեթե գորդի խավը ներկված և խունացող ներկերով, լվանալու ընթացքում այդ ներկերը կամ բոլորովին կամ զգալի կերպով կորցնում են իրենց գույնը, իսկ բուսական դիմացկուն ներկերն ընդհակառակը՝ նրանց գույնն ավելի



Նկ. 9. Յերեվանի գորգագործական արտելի գորդի արհեստանոցը  
60 տուբագ, 110 աշխատավայր, 1936 թ.

պայծառանում եւ ու փայլ և ստանում, յերկրորդը՝ գորգը քիմիական նյութերով (խլոր, կառուստիկ և այլն) լվանալուց յենթարկվում եւ ախտահանման (դեղինֆեկցիայի), ահա այդ նկատառումներով վերջին տարիներում արտասահմանում անհրաժեշտորեն պահանջվում եւ, զորպեսզի գորգերը նախքան վաճառելը քիմիապես ըլանան, սակայն Խորհրդային Միության մեջ վոչ վոքի հայտնի չեր զորգերի քիմիական լվանալու միջոցը, իսկ վորովհետեւ Արտաքին Առևտության ժողովականացուր տարի խոշոր վայուտագին գումար եր վճարում արտասահմանում զորգերը լվանալու համար, ուստի, յերբ հայտնի դարձավ, վոր Հայաստանում արդեն ձեռնարկվել եւ այդ աշխատանքին և զորգերը քիմիապես

Դվագլում են, այս ել շատ հաջող կերպով, առաջարկվում ե Հայուսանի Գորգմիության ծավալել այդ աշխատանքն անսպես, վորպեսզի հնարավոր լինի մյուս հանրապետություններին ևս սպասարկել:

Նույն մասնագետ Խ. Մահամետ է. Մահամետ և յանի առաջարկությամբ և նրա կազմած նախագծով, վորոշվում ե գորգերի ըմացման գործը յենթարկել մեքենայացման և արդեն պատրաստված ե Յ ըմանալու մեքենա, վորոնք սարքավորվում են նոր արհեստանոցի շենքում:



Նկ. 10. Գորգերի թիմիական բացումը ձեռքով 1934 թ. Յեղեռ

Բացի այդ Գորգմիությունը ձեռք ե բերել գորգերի խավը խուզելու մեկ մեքենա, այդ մեքենաներն անհամեմատ ավելի արդյունք են տալու, քան այս, վոր այդ աշխատանքները մինչև այժմ կատարվում եյին ձեռքով:

Գորգերի ըմացման գործը Խորհրդային Սիության մեջ այժմս կատարվում ե միայն Հայաստանում, ուստի բոլոր մյուս հանրապետություններից գորգեր ուղարկվում են ըմանալու Յեղեռման, իսկ գորգեր ըմանալու գործը սովորելու համար Հայաստան մեջալիս ուսանողներ այլ հանրապետություններից:

Թուրքմենստանի գորգագործական միությունը, վորն ամե-

Նախոշոբըն և Խորհրդային Միության մեջ, ուղարկելով 2 ռազմական գիրքներ և Հայաստանի Գորգմիությանը հետեւյալ գրությունով՝

«Այս փաստը, վոր Միջին Ասիայում, համաձայն Ներշահի նկարագրության, 10-րդ դարում, Խալիֆա Թաղավորի պալատում զոյսություն և ունեցել գորգերի արտադրության արճեստանոց և Թուրքմենստանում, վորտեղ 13-րդ դարում համաձայն Մարկո-Պոլոի (իտալացի զիտոնական ճանապարհորդ) տեղեկությունների».



Նկ. 11. Գորգերի խռովելը քիմ. լիստուաց հետո 1934 թ. Ցերկուն

արտադրվելիս են յեղել աշխարհի ամենալավ գորգերը, 1934 թ.-այստեղից Ձեղ մոտ՝ Հայաստան են զայիս սովորելու գորգերի վերամշակության ձևը, դա ազեցույց և այն բանի, վոր ինչպիսի խոշոր նվաճում և կատարել Հայաստանը գորգերի արտադրության զարգացման գործում»:

## ԳՈՐԴԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ

Առ 1935 թ. հունվարի 1-ը, Հայաստանի գործադորժությանն զրենից Ներկայացնում և հետեւյալ պակտերը, սկսած 1930 թ. Հայաստանակոսպի գործադորժական բաժինը, մի քանի անգամ վերակառուցումից հետո, ավելի ու ավելի արագ թափով ժամանակամ և իր աշխատանքները և հետպահետեւ ընդգրկում և Հայաստանի համարյա բոլոր գործադորժական շրջանները, գորտեղ անցյալում գործադություն գոյառնելուն չի ունեցել, ինչպես նոր-Բայազենամի և Մարտինու շրջանները:

Բացի զյուղական վայրերից, գորգերի արտադրությունը խոշոր չափով գարգանում և քաղաքներում, նրաց թվում, զիմավորապես Յերևանում, Լևինսականում, Նոր-Բայազետում ու մասնամբ Կիրովականում և Գորիսում: Էստ վորում Լևինսականում ու Յերևանում արտադրվում են ամենաբարձրորակ գորգեր, չորսիվ հռնաստանից Ներգաղթած հմուտ գործադորժուհների, վորոնց խոշոր մասը Ներկայում ընդդրված և արհեստանոցներում:

Վերջին 2-3 տարիների ընթացքում Գորգմիռությունն աշխատում և գորգերի արտադրությունը հասարակության չափով գորգադորձների աններից փոխադրել արհեստանոցները, նախ այն նպատակով, վոր ընդհանուր արհեստանոցում գործադորձները սովորում են կողեկտիվ ախշատանքի ու մայումն կազմեր են հանդիսանում և յերկրորդ՝ արհեստանոցում չորսիվ մասնավետ հրահանգչի մշտական հակողության, ստացվում են անհամեմատ բարձր վորակի գորգեր:

Ներկայում արհեստանոցներ կան համարյա բոլոր շրջաններում, վորոնցից որինակելին կարելի յե ճամարել Յերեվանի և Նորբարձենի (Յերեվանի մոտ) արհեստանոցներն ու Կիրովականի և Ս. Բ րոյանցի ան վանա արհեստանոցը:

Այն շրջաններում, վորտեղ գործադորժությունը նոր և մոցը վում, կազմակերպվում և ընդհանուր արհեստանոց ու մասնավետ հրահանգչի միջոցով տևզի գեղջկուհները սովորում են գորգ գործել: Պետք և ասել վոր բոլոր նոր սովորողները վարժվում են գորգ գործել վոչ թե միայն մատներով, այլ և կեռով (չանգալով), վորն ավելի հեշտացնում և աշխատանքը:

Գորգ գործելն առանաբակ բարդ արհեստ չե, բայց մանրանկակիտ և նա կարելի յե սովորել մի քանի որվա մեջ, զիմավորապես պահանջվում և խմանալ գորդի հենցի պատրաստելու և

ասողը կապելու ձեզ, նաև միջնաթելի անցկացնելու ձեզ, իսկ հանգույցների կապելը կարելի յէ յուրացնել մի քանի բովեյում:

Գորդը լավ գործելու համեր զիմավորապես պահանջվում է ուշադրություն Դրա համար ել նկատվում է, վոր մեծ մասամբ նոր սովորողներն ավելի ուշադիր են և գործում են լավ վորակի գորգեր, քան յերկար տարիներ աշխատող գորգագործները, յեթե պահանջված ուշադրություն չեն ունենում դեպի աշխատանքը:

Գորգմիությունը 1934 թ. վերջին վերակառուցումից հետո անվանվում է Գորգմիավորում, վորի ընդհանուր ղեկավարությունն իրագործում է Հայտնարկութը, հանձինս նրա վարչության նախագահ Հմայակ Յերզիկյան է:

Գորգմիավորման վարչության կազմը բաղկացած է հետեւյալ բաժիններից՝ կազմ-արտադրական, պլան-հաշվառման, մթերման ու մատակարարման, կենտրոնական հաշվապահության և ընդհանուր բաժին, վորոնց գլխավորում է վարչության նախագահը:

Ներկայումս գորգագործական արտեխների մեծ մասը խոշորացված են և գտնվում են շրջանային կենտրոններում ու քաղաքներում Յերեվան, Լենինական, Երբովական, Ստեփանավան, Նորբայազետ, Մարտունի, Բասարգեջար, Իջևան, Շամշադին (Բերդ), Զանգեզուր (Գորիս և Սփյուիս), վորոնց ունենալով այդ կենտրոններում արհեստանոցներ և պահեստներ, միենալի ժամանակ տալիս են գորգեր գործելու և իրենց շրջանի գյուղերում գտնվող արհեստանոցներին և տան մեջ աշխատող գորգագործներին: Այդ գյուղական բոլոր գորգագործական կետերի քանակն ընդհանուր առմամբ կազմում է 60-ից ավելի՝ 2500 գորգագործներով, վորոնց աշխատանքներն սպասարկում ու ղեկավարում են գորգմիավորման դասընթացներն ավարտած մոտ 80 մասնագետ հրահանգիչները:

Գորգմիավորման ցանցը մեջ են մտնում նաև 3 գորգագործական կետ, վորոնց գտնվում են Համալու, Ուգումբար և Կողը գյուղերում, վոր 1934 թ. հանձնվել են տեղի կոլտնտեսություններին այն նկատառումով, վոր գորգագործների մեծամասնությունը լինելով կոլտնտեսությունների անդամներ, ավելի նպատակահարմար կերպով կողտագործվեն վերջինների կողմից, սակայն մեկ տարվա այդ փորձը ցույց տվեց, վոր կոլտնտեսություններն անկարող հանդիսացան աշխատանքները ռացիսնալ կերպով կազմակերպել ու պատշաճ ղեկավարություն ցուցաբերել նրան հետին տեղ գնելու հետեւանքով, և ավելի լավ կլիններ, վոր այդ 3 կետերը կը կին վերադարձն գորգմիավորման ցանցի մեջ:

1935 թ. արտադրական պլանը կազմում է 12000 քառ. մետր գործ, վորն իրազործելու համար անհրաժեշտ և մոտ 2500 գորգագործ։ Չայած վոր գորգագործների թիվը համեմատ 1932-33 թվականների հետ զգալի չափով պակասել է, սակայն չորրորդ արեւատանօցների քանակի ավելացման բարձրանում և նուև միջին արտադրողականությունը, վորովնետն արհետանոցներում գորգագործներն աշխատում են որեկան 8 ժամ, տարվա մեջ 11 ամիս շարունակ և միջին հաշվով գործում են 7-8 ք. մետր գորգ մինչդեռ անհրում աշխատող գորգագործները, վորոնք դեռ կազմում են խոշոր մեծամասնություն, աշխատում են պատահական կերպով, այս եւ տարվա մեջ վոչ ավել քան 5-6 ամիս և միջին հաշվով արտադրում են 3-4 քառ. մետր գորգ։

Հայաստանում մեծ մասամբ գործվում են խիտ գործվածքի գորգեր՝ վորոնց մեկ քառ. մետրի մեջ լինում է 250-300 հազար հանգույց (գործվածքը վորքան խիտ լինի, այնքան ավելի յերկար ժամանակ և պահանջնում և ավելի բարձր գնահատվում), իսկ գորգագործը 8 ժամվա ընթացքում կարող ե կապել վոչ ավել քան 5-6 հազար հանգույց։

Նախապատերազմյան շրջանում Հայաստանի ամենախիտ գործվածքի գորգերը 75-80 հազար հանգույցից ավել չեն ունեցել իսկ մեծ մասամբ ունեցել են 50-60 հազար։

Համաձայն 2-րդ հսկամյակի պլանի նախատեսված եր, վոր Գորգմիավորումը 1935 թ. պետք ե արտադրել 20.000 ք. մ. գորգ, սակայն դյուզական կոլտնտեսությունների վերջին տարիներում ուժեղ գարգացման ու ընդհանրապես գյուղացիության տնտեսական դրության բարելավման հետևանքով այս գորգագործները, վորոնք մեծ մասամբ կոլտնտեսությունների անզամներ են, վորոշ շրջաններում, գլխավորապես տեխնիկական բույսերի մշակույթների շրջաններում այժմ՝ առանձին կարիք չեն զգում գորգագործությամբ պարապելու, վորն այնքան յեկամուտ չի տալիս բնչքան գյուզանտեսական աշխատանքը կոլտնտեսությունում։ Ուստի այդ շրջաններում գորդ գործել ցանկացողների թիվը հետզհետե նվազում է, չետևապես անհրաժեշտ և դառնում գորգագործությունը տարածել այս լեռնային շրջաններում, վորտեղ ձմեռն ավելի յերկարատև և հացարույսերի ու տեխնիկական բույսերի ինտենսիվ կուլտուրան ուժեղ չի զարգանում, և հնարավորություն կլինի կանանց ազատ բանվորական ուժը գործադրել գորգագործության նպատակին։ Նկատի ունենալով այդ, անհրաժեշտ և դառ-

նում՝ յուրաքանչյուր տարի պատրաստել մասնագետ հրահանգիչների նոր կադրեր:

1934թ. ընթացքում Հայանարկոոպի գորգմիավորման զծով Յերեվանում կազմակերպված դասընթացներում, թե անսականութեն և թե գործնականութեն պատրաստվել են 40 հոգի յօթնամյա և միջնակարգ կրթություն ունեցող յերկու սեռից յերիտասարդ մասնագետ կադրեր, վորոնց մի մասը Հայաստանի զանազան շրջաններում ներկայում բնագույրույն ղեկավարում և գորգերի արտադրությունը. Այդ յերիտասարդ բավականաչափ կրթություն ունեցող մասնագետներից (վորպիսիք նախկինում գորգագործ չեն յեղել), հավանական և գոնվեն անպիսի մարդիկ, վորոնք խորանալով իրենց մասնագիտության մեջ, կարողանան ավելի յեկա կատարելազործություններ մտցնել գորգերի արտադրության ընագավառում ու իրենց հերթին պատրաստեն նոր կադրեր:

Ներկայում չնայած, վոր ձեռքի գործված գորգերի պահանջը Յեմբոպական ու Ամերիկական շուկաներում չի թուլացել, սակայն, վորովհետև առաջարկը քանի զնում ամելանում և, ուստի գորգերի առևտորի բնագավառում մրցութեա ավելի ու ավելի ուժեղանում և, վորի հետևանքով ղորգերը վաճառվում են համեմատած առաջվա հետ ցածր զներով:

Վերջին տարիներում Զինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Թյուրքիան և այլ յերկրներն արտահանում են ահազին քանակությամբ գորգեր (տարեկան մոտ մեկ միլիոն քառ. մետր) և վաճառում են չափազանց ցածր զներով, չնորհիլ այդ յերկրներում գոյություն ունեցող բանվորների շահագործմանը. Այս ինչ հորհրդային Միությունը չի կարող այդ միջոցին դիմել:

Խորհրդային Միությունում տարեկան արտադրվում և մոտ 150 հազար քառ. մետր գորգ, վորից բարձր վորակ կազմում են վոչ ավելի, քան 50 տոկոս, և վորոնք արտասահմանյան շուկաներում հաջող վաճառվում են:

Հայաստանում բարձրորակ գորգերը կազմում են 60 տոկոս և արտակարգ վորակի՝ 10 տոկոս, իսկ մասցաները լինում են մեջակ վորակի:

Վորպեսզի բոլոր արտադրված գորգերը հաջող կերպով վաճառվեն, անհրաժեշտ և ավելի ու ավելի բարձրացնել գորգերի վորակը և գլխավորապես նրանց գեղարվեստական կողմը, վորը գորդի արժեքավորման համար գերակշռող նշանակություն ունի:

Ինչպես Գորգմիավորումը, նույնպես և Միության մյուս հան-

բառետությունների, դորվագնործական կազմակերպությունները, իրենց արտադրած բոլոր գորգերը հանձնում են Պետառին (Պոտարգ), վորը լինելով Անդրկովկասում միջնորդ Միութենական անախագործական ապրանքների արտահանման կազմակերպության և Կովյորկուստեկսոպորտե-ի միջնորդ լիազորը, Արտաքին Առևտրի Ժողկոմատի մի ճյուղն և և փաստորներ իրազործում և գորգերի վաճառքն արտասահմանում:

«Կովյորկուստեկսոպորտե-ը նաև ներմուծում և արտասահմանից գորգազործության համար ներկերը՝ ինդիգո (ինդակ) յեզ կաշենիլ (վորդան կարմիր), վորոնք Խորհրդային Միությունում չկան:

Նմանապես նա մատակարարում և նաև գորգերի նկարներ, վորոնք պատրաստվում են Թիֆլիսում Անդրբետառի նկարչական արհեստանոցում: Գորգազործության համար անհրաժեշտ քանակի բուրդ, բամբակյա թել, տորքերի համար փայտանյութ, յերկաթ և թելերի ներկելու: Համար զանազան քիմիական նյութեր ստացվում են պղանային կարգով Համամիութենական Արհեստագործական Կոոպերացիայի Խորհրդի՝ Վասեկոպրոմվետի միջոցով:

Բուսական ներկեր, ինչպես կարմիր գույնի համար տորոն, դեղին գույնի համար գեղնածաղիկ և սրճագույնի համար ընկույզի կեղեկ Գորգմիավորումը մթերում և Հայաստանում, սրանցից տորոն—տարեկան մոտ 15000 կիլոգրամ, պահանջի միայն մի յերրորդ մասը մթերվում և Հայաստանում, իսկ մեացածը ձեռք և բերգում Աղբբեշանի և Դադուանի հանրապետություններում:

Հին ժամանակներում նախելին Հայաստանի գորգազործները կարմիր գույնի համար, բացի տորոնից խոշոր չափով գործածելիս են յեղել նաև մորդան կարմիր հայտնի ներկը, վորն ստացվում և մի տեսակ փոքր միջատից (վորդ), վորն ապրում ու բազմանում և միայն հատուկ թփերի վրա, վոր հներում Հայաստանում բավականին տարածված և յեղել սակայն այժմ զրեթե բոլորովին անհետացել եւ Ներկայումս այդ ներկը (կաշենիլ) ստացվում և միայն Ամերիկայից կամ Իսպանիայից:

## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գորգազործ կոլտնտեսուհիները ձմեռային ամիսներին և ընդհանրապես տարգա ընթացքում նրանք, վորոնք իմանում գորդ գործելը, սովոր չեն առանց աշխատանքի մնալ անկաս-

կամ այնքան ազատ ժամանակ կունենան, վորպեսզի զործեն 1—2 դորդ թե իրենց սեփական կարիքների և թե կոլտնտեսության կամ վաճառքի համար։ Անհրաժեշտ և կազմակերպել այդպիսիներին այնպես, վոր գորգագործությունը կունենանությանների անման հետ նույնպես շարունակի իր գոյությունը, և դրան պետք և ամեն կերպ նպաստեն կոլտնտեսությունների վարչությունները, նույնիսկ ձեռք առնեն միջոցներ, վորպես այդ գեղեցիկ և արժեքավոր արտադրությունն իրենց մոտ ավելի ևս զարգանաւ։

Գորգագործությունը յեթե լավ հիմքերի վրա դրված լինի և արտադրվեն բարձրորակ գորգեր, կարող և ավելի արդյունավետ լինել քան վորմեա այլ արհեստ։ Բացի այդ կոլտնտեսության վարչությունը պետք ե ուշադրություն դարձնի, վորպես ուղի յուրա քանչյուր յերիտասարդ կուլտը նույնունի, վորը չի իմանում գորգ գործել, անպայման սովորի այդ արհեստը և ձմեռվա ամիսներին զրազվի դրանով։

Եեվ յեթե կոլտնտեսությունները կարողանան գորգերի արտադրությունը կազմակերպել նպատակահարմար կերպով և շահագրգուեն գորգագործներին բավարար աշխորով, կարող կլինեն լավագույն գորգերի մի մասը հատկացնել պետությանը և քաղաքություն համար։ Պետք ե հիշել, վոր լավ վորակի գեղեցիկ գորգը վորքան ել ինքնարժեքով բարձր լինի, նա ավելի շահավետ կղառնա, քան ցածր ինքնարժեքով միջակ վորակի գորգը։

Եեթե գորգերի արտադրությունը դաշտային շրջաններում վորոշ չափով պակասի՝ սակայն լեռնային շրջաններում, ինչպես և նիմինականի, Կիրովականի, Դիլիջանի մի քանի մասերում, նմանապես Նոր-Բայազետի, Մարտունու, Բասարգիչարի, Ախուտայի և Արարանի, վորտեղ ձմեռն ավելի յերկարատե և և մինչև այժմ այդ շրջաններում Գորգմիավորումը հնարավորություն չի ունեցել ծավալելու իր աշխատանքները, այդ վայրերում գորգագործությունը կարող ե լայն ծավալ ստանալ։

Միայն 1934 թ. սկսած Գորգմիավորումը փորձ արեց կազմակերպել գորգերի արտադրությունը Նոր-Բայազետում, Մարտունում և Բասարգիչարում ու չնայած տեղի ընակիչները բոլորովին չելին իմանում գորգ գործել, սակայն շնորհիվ արհեստանոցների համար ձեռք բերած համապատասխան շենքերի, կարճ ժամանակա ընթացքում արդ 3 կետում Գորգմիավորման մասնագետների միջոցով պատրաստվեցին մոտ 300 գորգագործ, մեծ մա-

սամբ յերիտասաւրդ աղջիկներից, վորոնք հենց սկզբից վարժվեցին արտազրել վորակավոր գործեր, Յեղ յեթե այդ շրջանների պյուղերում ևս գտնվեն հարմար շնչքեր արհեստանոցների համար, հավանական ե, վոր գորգագործների թիվը մի քանի հազարի համնի և դա իրագործելի կլինի, յեթե յուրաքանչյուր գյուղի կողմանակություն կամ գյուղաբորուրդ գիտակցի գորգագործության կարևոր նշանակությունն ու հատկացնի գորգագործության արհեստանոցի համար համապատասխան շենք:

Նույնպիսի հաջողությամբ անկասկած գորգագործությունը կարելի յե կազմակերպել Հայաստանի մյուս լեռնային շրջաններում:

Բացի գյուղական գորգագործներից, քիչ չեն մինի գորգ գործել սովորելու ցանկացողները նաև քաղաքներում, վորովինեան այժմ գորգ գործելու արհեստն այնքան հեշտացել ե, վոր յերր Գորգմագորման կողմից արամադրվում և անհրաժեշտ գործիքներ—պատրաստի ներկված թելեր և նկար, գործել սովորելու համար 10—15 որից ավելի ժամանակ չի պահանջում:

Գորգագործությունն իրեն գեղարվեստական աշխատանք, անհամեմատ ավելի բարձր ե և հետաքրքիր, քան վորեն ձեռագործ, վորով կանայք զբաղվում են տներում ազատ ժամանակ, և ինչու ամեն տան մեջ չի կարելի գործել տարվա ընթացքում թեկուզ մեկ կամ յերկու փոքր գորգ:

Պետք ե նշել նաև այն, վոր ինչքան գորգ գործողը գիտակից և կուլտուրական ե, այնքան բարձր վորակի գորգ ե արտապրում, իսկ ինչպես գիտենք լազ վորակի գորզը միշտ գնահատվում ե ավելի բարձր և տալիս ե ավելի վարձատրություն:

Գորգագործական տորքը պետք ե լինի իրեն զարդ յուրաքանչյուր տան մեջ—ինչպես որինակ՝ թեղիքայում և Շվեյցարիայում համարյա բոլոր տներում կարելի յե պատահել ասեղմագործության գործիքի, իսկ Շոտլանդիայում (Անգլիա) ջուլհակության տորքը, նմանապես Միության հյուսիսային շրջաններում, վորտեղ միլիոնավոր կանայք զբաղված են տան մեջ հաշիաների հյուսվածքով, վորը հայտնի յե Շիուսական կրուժեվաշ անունով և վաճառվում ե թե արտասահմանում և թե ներքին շուկաներում:

Այդպիսով յեթե գորգագործությունը տարածվի Հայաստանի բոլոր շրջաններում, կասկածից գուրս ե, վոր յուրաքանչյուր տարի աշխատող գորգագործների թիվն աստիճանաբար

կրարձրանս և սխալված չենք լինի, յեթե ասենք, վոր մի քանի տարուց հետո նրանց թիվը կամանի տաս հազարից ավելի ու գորգեր կարտադրվեն մի քանի տասնյակ հազար քառ. մետր:

Այստեղ կարող ե հարց ծագել, արդյոք Հայաստանում գորդագործությանը կարելի կլինի տրամադրել այդքան բուրդ և հնարավոր և արդյոք այդպիսի խոշոր քանակի գորգեր իրացնել—վաճառել:

Բրդի խնդիրը, վորը հիմնական հումույթն և կազմում գորդագործության համար, այսուհետեւ կարող ե լուծվել բարեհաջող կերպով, չնայած, վոր ներկայումս բուրդը համարվում է զիֆիցիտային ապրանք և բաց և թողնվում ողլանային կարգավ, սակայն դա կրում է ժամանակավոր բնույթ և կախված է վոչխարաբուծության զարգացումից: Խոչպես հայտնի յեւ վոչխարների թիվը վերջին տարիներում կուլակային տարրերի ֆաստարարության հետևանքով, ինչպես նորհրդային Միության մյուս հանրապետություններում, նույնպես և Հայաստանում պակասել եւ:

Համաձայն Հայպետառի տվյալների 1925 թ. վոչխարների և այժերի թիվը Հայաստանում յեղել է 1.160 հազար, իսկ 1933 թվին մոտ 600 հազար, սակայն 1934 թ. արգեն սկսում և աճը և այդ թվի վերջերին հաշվում է 700 հազարից ավելի, վոր տալիս և աճ 17 տոկոս: Գետք և յենթագրել, վոր անասնապահության զարգացման վերաբերյալ, պետության կողմից ձեռք տառած հատուկ միջոցառումների չնորհիվ, վոչխարների քանակը տարեց տարի պետք և ավելանա:

Ավելորդ չի լինի այստեղ ասել, վոր Հայաստանում պետք և ուշադրություն դարձի կիսակոշտ, գլխավորապես սպիտակ բուրդ տվող վոչխարների բազմացմանը՝ բայրաս, մակու, թուշի և գոնմա ցեղերի զարգացման վրա:

Ինչ վերաբերում է այս խնդրին, թե կարելի յեւ արդյոք արտադրած գորգերն իրացնել դրսի և ներսի շուկաներում, պետք և ասել, վոր յեթի նկատի առնենք այս, վոր նորհրդային Միության բոլոր հանրապետություններում գորգերի արտադրությունը մի քանի տարուց հետո կերպինապատկվի կամ կյեռապատկվի, այսուամենայնիվ հարկավոր և մի քանի տասնյակ տարիներ, վորպեսզի բավարարվի Միութենական ներքին շուկայի այս խոշոր պահանջը, վոր ներկայումս կա և պետք և համոզված լինել, վոր այդ պահանջը հետզհետեւ ավելի կուժե-

զանա կապված մեր աշխատավորության տնտեսական դրության ընդհանուր վերելքի հետ, նկատի չունենալով, մինչդեռ գորգերի և քաղաքացիների վորը նույնապես չի դադարել գոյություն ունենալուց:

Միաժամանակ կասկած չի կարող լինել, վոր լավագույն դորդերի զգալի մասը կշարունակվեն արտահանվել, վորովհետեւ արտասահմանյան շուկաները միշտ պահանջ են զգացել և կզանցեարդրդային Միությունում, գորգերի նկատմամբ, իսկ ներկայաւում առանձնապես այդ պահանջն ուժեղ և Հայաստանում գործված գորգերի վերաբերյալ:

Հետեւապես այդ բոլորը զալիս ե ասելու, վոր ձեռքի գործված գորգերի արտադրությունը զեռ շատ տարիներ կշարունակվի:

Սրանից մի քանի տարի առաջ, յերբ սկսեցին արտադրվել ֆարբեկային գորգեր, շատերն այն կարծիքի եյին, վոր տնայնագործական գորգերի արտադրությունն այլևս գոյություն չի կարող ունենալ, սակայն ընդհակառակը, գորգերի այդ արտադրությունը քանի զնում և ավելի և ծավալվում ե, ուստի մեզանից ե կախված, վորպեսզի այդ գեղեցիկ և արժեքավոր արհեստը Ասրհրդային Հայաստանում ավելի ևս կատարելազործենք և պատշաճ հիմքերի վրա դնենք:

Այժմ դա ավելի հեշտությամբ հնարավոր ե, քանի վոր ունենք բավական թվով պատրաստված յերիտասարդ մասնագետ—հրահանգիչ կազրեր:



~~Ա~~ Ա

23106

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0003844